ԱՐԱՄՈՒՍԻ ԽԱՉՔԱՐԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Հայաստանի գեղարվեստական մշակույթի, միջնադարյան արվեստի տարեգրության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ամենատարբեր առիթներով կանգնեցված ժողովրդական արվեստի հուշարձանները՝ խաչքարերը։ Հայ մատենագրության մեջ քարե քանդակի վարպետների կյանքի մասին արժանահավատ տեղեկությունները գրեթե բացակայում են։ Նրանց մասին հատ ու կենտ, երբեմն միայն անվան հիշատակություններ են պահպանվել խաչքարերի, կերեզմանական կոթողների արձանագրություններում։ Քիչ են XII—XIII դդ. այն խաչարձան կոթողները, որոնց վրա քանդակազարդող վարպետները հետք են թողել իրենց մասին, դրոշմել իրենց անունները։ Վերջին տասնամյակներում հայտնաբերվել են քանդակագործների նոր ստեղծագործություններ, ինչպես նաև նոր անուններ։ Ընթացիկ ուսումնասիրությունների բերումով լինելով Աթովյանի շրջանում, պաումական Կոտեից գավառի Արամուս հնավայրում, մեզ հայտնի դարձան հայ կերպարվեստի պատմության մեջ իր տեղը նվաճած Վարդ անունով քանդակազարդող վարպետի XIII դ. սկզբներին կերտած ստորագիր և անստորագիր նոր կոթողները։ Մեծ չէ այս բարգործ վարպետից մեզ հասած քանդակագործական ժառանգությունը։ Նորահայտ նյութերով նրա գործունեության ոլորտը առայժմ սահմանափակվում է միայն Ջրվեժ և Արամուս հնավայրերով։ Վարպետի թողած ամենահին ստեղծագործությունը ծանոթ է Ջրվեժ գյուղում։ Տեղի բնակիչներին «Նահատակի գերեզման» անունով են հայտնի գյուղից հարավ-արևելք, այգիների մեջ գտնվող Վարդի ձեռակերտ 1173 թ. գեղաքանդակ խաչքարը (փոխադրվել է Երևան) և տասնանագիր ունեցող երկթեք շիրմաքարը, որի հյուսիսային կողին փորագրված արձանագրությունից իմացվում է, որ այն դրվել է ոռոգման ջրի համար զոհված Խաչատուրի գերեզմանի վրա։

ԱՅՍ ՏՈՒՆ ՍԳՈ... ԽԱ/ՉԱՏՐՈ ՈՐ ՍՊԱՆԱՒ Ի/ ՎԵՐԱ ՋՐԻՍ ՋՐՎԵԺՈ
ԿԻՍԱՒՐԵԱ ԵԼԻ ՅԱՇԽԱՐՀԷ ԹՈՂԻ ԿՍԿ/ԻԾ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ՈՐՔ
ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍՐ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵԱՋԻՔ Ի ՏՐ/ ԹՎ:ՈՒՐ:(1173) ՎԱՐԴ[1]։

Արամուսը երկրորդ, նոր հայտնի դարձած վայրն է, որտեղ պահպանվել են Վարդ անունով քանդակազարդող վարպետի ստեղծագործությունները։ Գյուղի ծայրի բարձունքում գտնվող Աստվածածին մենաստանի շրջավայրի մի մասը ծառայել է իբրև գերեզմանատուն և մնում է մինչև այսօր։ Ավերումից ազատ է մնացել այդ միջնադարյան գերեզմանատան տապանաքարերի ու խաչքարերի մի մասը։ Մատուռի հյուսիսային պատի մոտ, ճարտարապետո-

1 Մ. Սմբատյան, Տեսակիր Գեղարքունի ծուցակարգ գավառի, Վաղարշապատ, 1893, էջ 257, Ս. Գ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 140։

րեն ձևավորված պատվանդանի վրա, կողք-կողքի զետեղված երկու խաչքարերից կանգուն է միայն մեկը։ Մատուռի պատի մեջ, իբրև երեսապատող քար, դրվել են երկրորդ քանդակազարդ խաչքարի բեկորները։ Արամուսի կանգուն խաչքարը կարմիր տուֆից է (նկ. 1)։ Բուն խաչքարի բարձրությունը 180 սմ է, լայնությունը վերևում՝ 88, իսկ ներքևում՝ 90 սմ։ Պատվանդանը, որի վրա բարձրանում է խաչքարը, քառաստիճան է։ Խաչքարի պատվանդանի երկարությունը 114 սմ է, արձանագիր աստիճանի բարձրությունը՝ 55 սմ։ Խաչքարի պատվանդանին դեմ-հանդիման 182 սմ երկարություն, 78 սմ բարձրություն ունեցող երկթեք շիրմաքարն է, որը դրված է բարձիկի վրա։ Գերեզմանաքարի հարավային լանջին փորագրված երկտող տապանագիրը հետևյալն է.

:ՈՄ:(1201) ԹՎ ՓՈԽԵՑԱԻ ԳՐԻԳՈՐ ՔԱ-
ՀԱՆԱ ԿԵՆԱՑ ԱՍՏ Ի ԿԵԱ / ՆՔՆ ՄԵՐ ՔՍ։

Նկ. 1

Չորս տարի անց, 1205 թ., Գրիգոր քահանայի հիշատակին կանգնեցվել է գեղաքանդակ խաչքար, որի հեղինակն է Վարդը։ Այս կոթողն աչքի է ընկնում բուսական և երկրաչափական պատկերների անթերի կատարումով, զարդաձևերի վարպետ համադրությամբ։ Քանդակազարդող վարպետը խնամքով է մշակել խաչքարի մակերևույթը։ Նա ցուցադրել է այն բարձր ճաշակով պատկերազարդելու իր մեծ շնորհքն ու վարպետությունը, հորինվածքին հաղորդելով ամբողջականություն ու արտահայտչականություն։ Մանրակրկիտությամբ են քանդակվել խաչքարի քիվը, եզրային ժապավենները ու վահանը։ Կոթողի քիվի մի մասը կոտրված է։ Պահպանվածի վրա վերարտադրված են ճարտարապետական զարդամոտիվներ՝ գոգավոր դրված կիսաշրջաններ, ստորին մասի գոգավորության կենտրոնում հենված են կամարների շարքերը։ Կառուցվածքային այս եղանակով առաջացել են նշաձև զարդերի պատկերներ, որոնք հաճախ են հանդիպում V—VII դդ. ճարտարապետական հուշարձանների վրա։ Քանդակագործն այս ստեղծագործության մեջ դրսևորել է հայ քարարվեստի սկզբունքների իր խոր իմացությունը և մեծ վարպետությունը։ Պատկերազարդ քարի կենտրոնում՝ խորանի տակ, խաչի ավանդական քանդակապատկերն է, որի ստորին թևից աղեղնաձև դեպի վեր են բարձրանում ժապավենաձև զարդապատկերներ։ Ավելի ներքև տեղադրված է մի հյուսվածք, որն ասես վերևից ժապավենով է կախված։ Խաչքարի ստորին մասում քանդակված է ավանդական վահանը։ Ուշագրավ է կազմողի վարժ ու հմուտ ձեռքով քանդակված կիսաշրջանը, որն ասես այդ վահանի հատած մասն է։ Երկու կողմերից խաչքարը երիզված է այսօրինակ կոթողների վրա հաճախ հանդիպող, սակայն նրբերանգներով աչքի ընկնող հյուսկեն զարդաքանդակի

շարքով։ Այստեղ քանդակագործի գործադրած արտահայտչական միջոցների մեջ ավելի քան ակնբախ է դասական քանդակագործության դրոշմը։ Քանդակի հյուսվածքը բաղկացած է ուղղահայաց իջնող օղերից, որոնք իրար են միացված հյուսկեն հանգույցներով։ Օղերի մեջ այս շարքի հետ գեղեցիկ համադրությամբ հյուսվում է շեղանկյունանիստ շղթայի շարքը, որը երկու կողմից շրջափակում է խաչքարի զարդարուն մակերեսը։ Խաչաքանդակի վերին թևի երկու կողմերում խաղողազարդի ոճավորված պատկերներն են։ Այս մոտիվը վերարտադրելիս քանդակազարդող վարպետն աշխատել է հարազատ մնալ ավանդականին։ Արամուսի խաչքարի հարթաքանդակների մեջ առավել հետաքրքիրն ու ինքնատիպը կիսավահանի հարդարանքն է։ Կիսավահանի ս.րտաքին կորագիծը կազմված է եռաթել պարանահյուսի զարդապատկերից։ Կենտրոնական մասը կազմում է վարդյակի զարդաքանդակը։ Քանդակագործն այստեղ ցուցադրել է իր կատարողական վարպետությունը. կարողացել է դգալ վարդյակի գծային ռիթմը և այն քանդակել արտակարգ նրբությամբ, բարձր արվեստով։ Խաչքարի պատվանդանին գեղեցիկ տառերով փորագրված արձանագրությունն ազդարարում է 1205 թ. Մարտիրոս, Սարգիս քահանաների, սրանց եղբայրների՝ Հովհաննեսի և Մխիթարի կողմից իրենց հոր՝ Գրիգոր քահանայի, հիշատակին խաչքար կանգնեցնելու իրողությունը։ Արձանագրությունն ավարտվում է օրհնանքի բանաձևով և խաչքարի կողքին՝ վարպետի անվան հիշատակությամբ (նկ. 2)։

Ահա դրեթե անաղարտ պահպանված արձանագրությունը.

Ի ԹՎ :ՈԾԴ: (1205) ԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ ՍԱՐԳԻՍ Ք/ԱՀ/ԱՆԱՅՔ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՅՈՎԱՆԷՍ ԵՒ ՄԽԻԹ/ԱՐ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ

Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒ

ՀԱՒՐ ՄԵՐՈ ԳՐԻԳՈՐՈ ՔԱՀԱՆԱՒ ՈՐ ԿԱՐԴԱՑ/Ք ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՏՐ ԵՒ ԱԾ ՅԻՇՈՂԱՅԴ ՈՂՈՐ/ՄԻ ԱՄԵՆ ՎԱՐԴ ԿԱՋՄՈՂ։



Նկ. 2

Քանդակազարդող վարպետի անվան հիշատակությունը, արձանագրության վերջին՝ Վարդ կազմող տողը, զետեղված է խաչքարի հարավային կողին։

Խաչքարի արձանագրության տարեթիվը՝ 1205 թ., հնարավորություն է տալիս երեսուն տարով երկարացնելու քանդակագործը գործունեությունը։ Ակներևաբար XIII դ. առաջին տասնամյակում է Վարդը սաեղծել նաև մյուս խաչքարը, որի պատվանդանն ու բեկորներն են միայն պահպանվել և թեև չունեն հեղինակի անվան հիշատակություն, ենթադրական չի մնում կոթողի հեղինակի ով լինելը։ Երկու խաչքարերի վրա եղած զարդաձևերի ընդհանրությունը և ոճական առանձնահատկությունները հավաստում են միայն բեկորներով մեզ հասած այդ խաչքարի՝ Վարդի ստեղծագործություն լինելը։ Հարկ է նշել, որ Ջրվեժի և Արամուսի կոթողները Վարդ կազմողի ստեղծած քանդակաշարի աննշան մասն են միայն։ Տակավին անհայտ է մնում քարգործ վարպետի թողած ժառանգության մեծ մասը, արդասիքը նրա ամրողջ սաեղծագործական կյանքի։ Ջրվեժի և Արամուսի այս գործերով պարգվում է քանդակագործի միայն այժմ մեզ հայտնի առաջին և վերջին քանդակների միջև ընկած ժամանակահատվածը (1173—1205 թթ.), նրա ապրած, սաեղծագործաբ վայրը՝ Կոտեից գավառը։ Սակայն չի բացառվում նրա ստեղծագործությունների առկայությունը պատմական Հայաստանի այլ գավառներում. Կասկածից վեր է, որ հայտնի կդառնան Վարդի նոր քարե «կտավները», որոնց հնարավորություն կտան ամրողջացնելու նրա ստեղծագործության պատկերը։

СКУЛЬПТОР АРАМУССКОГО ХАЧКАРА

ГРИГОР КАРАХАНЯН

Резюме

Надпись новонайденного хачкара в с. Арамус гавара Котайк (совр. Абовянский район) гласит о воздвижении этого мемориального памятника в 1205 г. На южной грани хачкара высечено имя мастера-скульптора, создавшего хачкар. Автор хачкара—известный скульптор конца XII-начала XIII вв. Вард, произведения которого имеются и в селе Джрвеж (1173 г.). Вероятно, этим замечательным скульптором было создано немало хачкаров, выявление и изучение которых представляет большой интерес.